ՀԱՍՏԱՏՈՒՄԵՄ

Տնօրեն՝ _____Դ.Մելքոնյան

«-01» սեպտեմբերի 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզի

Վանաձորի Ս.Զորյանի անվան №22 հիմնական դպրոց IX դասարան

Դասղեկ՝ Խաչատրյան Սիրանուշ Համլետի

« 2023- 2024 » ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2023-2024 ուստարվա 9-րդ դասարանում սովորում են թվով 26 աշակերտ, որոնցից 16-ը աղջիկ, 10-ը տղա:

Դասարանի աշակերտները պարտաճանաչ հաճախում են դպրոց, կատարում են ուսուցիչների հանձնարարությունները և պահանջները:Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների թիվը ավելի շատ է:Նաև շատ կարգապահ են:

Համախմբված են, մասնակցում են ներդպրոցական և արտադպրոցական բոլոր միջոցառումներին, Ընկերասեր են:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

- Դասղեկի ժամեր
- Հայրենասիրության առաջնայնության կարևորության խորացում
- Կարգապահական հարցեր
- Հետևել առաջադիմությանը, օգնել ետ մնացողներին
- Ձևավորել փոխադարձ օգնության մթնոլորտ
- Պատի թերթի լուսընծայում
- Սանիտարահիգիենիկ հարցեր
- Խրախուսանքներ և տույժեր
- Բարոյահոգեբանական առողջ մթնոլորի ամրապնդում
- Հայեցի արժեհամակարգի ձևավորում

3.1 Հոգևոր դաստիարակություն

Յուրաքանչյուր հայի համար հոգևոր հարստությունը իր հավատքն է առ Աստված, հավատքն է Առաքելական եկեղեցու նկատմամբ:

Այս ամենը սկսվում է մկրտությամբ, եկեղեցի այցելելով, եկեղեցում մոմավառության կուլտուրայով:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Գեղեցիկի հանդեպ սերը պետք է սերմանել դեռ մանկուց: Աշակերտը պետք է սովորի գնահատել արվեստի գոհարները, ընկալի գեղեցիկը, պահպանել ու փոխանցել հաջորդ սերունդներին:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աշակերտը պետք է գիտակցի ՀՀ աշխարհաքաղաքական դիրքի առանձնահատկությունները, հարևան երկրների հետ մեր բարդ փոխհարաբերությունները և ամուր կանգնի մեր սահմանների պաշտպանությանը՝ պահելով նրա անառիկությունը:

Հայ զինվորը իր հայրենասիրությամբ, իր սխրանքներով պետք է օրինակ լինի ամբողջ աշխարհի համար:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

« Առողջ մարմնում առողջ հոգի » կարգախոսը ուղղորդում է ֆիզիկական դաստիարակության գործում:

Սովորողները պետք է զգալի ժամնակ հատկացնեն մարզումներին, հաճախեն տարբեր սպորտային խմբակներ:

Ելնելով տարիքային առանձնահատկություններից՝ պետք է զերծ մնան վատ սովորություններից և վարեն առողջ ապրելակերպ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

« Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն» կարգախոսով պետք է սերմանել հետևյալը. յուրաքանչյուր աշխատանք գովելի է և արժանիէ հարգանքի: Համատեղ աշխատելու կուլտուրան սերմանվում է օրինակ շաբաթօրյակներով, խմբային աշխատանքներով:

« Բնությունը մեր տունն է»: Բնությունը պետք է ճիշտ օգտագործել, և բնապահպանական ճիշտ միջոցառումների ընտրությունը պետք է յուրացնել դպրոցական ուսումնառության տարիներին: Այն կարելի է սկսել ծառատունկ կազմակերպելով, թափոնների տեսակավորման և երկրորդային վերամշակման դասընթացներով, բնական ռեսուրսների օգտագործման տեսահոլովակներ դիտելով:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Սովորողի դաստիարակությունը երկկողմանի պրոցես է: Առանց ընտանիք- դպրոց կապի լավագույն արդյունքի հնարավոր չէ հասնել: Ծնող- ուսուցիչ փոխհարաբերության հիմքում պետք է լինի սովորողի որպես մարդ կայանալու, ՀՀ քաղաքացի լինելու և կրթված, գիտակ անձ դաստիարակելու վեհ արժեքը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթները	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	2023-2024 ուսումնական տարի		
II	Մեր ընտանիքը		
III	Ուսուցչի դերը կյանքում		
IV	Հայաստանի զինանշանի և դրոշի պատմությունը		
V	Կրթությունը մարդու կյանքում		
VI	Ի՞նչ է ազնվությունը		
VII	Ազատամարտի հերոսները		
VIII	Իմ երազանքը երեկ և այսօր		
IX	Մասնագիտական կողմնորոշում		
X	Իմ իրավունքները և պարտականությունները		
XI	Թմրամիջոցներ		
XII	Երկրաշարժ. Ինչպես պաշտպանվել		
XIII	Ինչպե՞ս պահպանել Երկիր մոլորակը		
XIV	Երեխաների վիճակն աշխարհում: Երեխաների իրավունքների կոնվենցիա		
XV	Մեդիագրագիտություն		
XVI	Ինտերնետը մեր կյանքում		
XVII	Գիրքը մեր հարստությունն է		
XVIII	Հայոց բանակ – մեր պարծանք		
XIX	Հավատք-եկեղեցի-հայ		
XX	Հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ինտեգրում		
XXI	Հիգիենա- կարևոր է արդյոք		
XXII	Ինքնազնահատում		
XXIII	Հաղորդակցական հմտությունների զարգացում		
XXIV	Բարեկիրթ վարքի կանոնների ուսուցում		
XXV	Հանդուրժողականություն		

XXVII	Բնապահպանություն		
XXVIII	Առաջադիմության գաղտնիքները		
XXIX	Կոնֆլիկտներ:Հաղթահարում		
XXX	ՀՀ հարստությունները		
XXXI	Հաղթանակների ամիս		
XXXII	Խաղաղության խորհրդանիշները		
XXXIII	Մեր դպրոցը մեր ընտանիքն է		
XXXIV	Ուստարվա ավարտ- ամփոփում		